## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ստացել ենք մեր քաղաքի երիտասարդ բանաստեղծներից նամակներ և ստեղծագործություններ:
Շնորհակալություն բոլորից:
Գրական էջի պատասխանատուն ուրախ կլիներ, եթե նրանք հեռախոսով կապվեին իր հետ՝ բացատրություն և ուղղություն ստանալու համար:
Գրական էջի պատասխանատուի հեռախոսի համարն է՝ 622433:
Այժմ, որոշ անհրաժեշտ շտկումներով, հրապարակում ենք յուրաքանչյուրից մի ստեղծագործություն:



## Հայրենի տուն

Մեր փողոցն ունի 15 տուն,
Մեկը մեկից փոքր ու սիրուն,
Տանից հեռու 15 տուն,
Որոնց մեջ ապրում են հայեր հեզ,
Որոնց սրտում կարոտը կա սարերի սեզ,
Ու ամեն մեկի հոգում կա մի Նարեկ:

Մեր փողոցում կա 15 սիրտ,
Ու ամեն սրտի մեջ հազար վիշտ,
Ու ամեն վիշտ ապրում է միշտ:

Մեր փողոցում կա 15 թռչուն,
Երազում են գնալ հայրենի տուն:

Է. Բաղդասարյան

Գառնի-Գեղարդ ճամփի վրա,
Մեծ Զարենցի կամարի տակ
Լուռ դիտում եմ ու աղոթում
Մեր ինքնության զազաթների վեհության դեմ:
Ես կախվում եմ գեղահնչուն մարդկանց խոսքին
Եվ ասում ինձ.-Բավ է,խանե՛նց,որքան տեսնես
որքան լսես
Գույն ու նվագ,
Հիմա նստիր,գլուխդ առ ափերիդ մեջ,
Դասավորիր այս ամենը մտքիդ անծայր
անդաստանում,
Որ երբ գնաս հեռու երկիր,
Նստես,գրես՝ ինչ տեսել ես-այս ժպիտը,այս
քարքարոտ,
Այս մրգաշատ,այս երգահորդ հողի վրա:
Հիմա գրեմ...

Ինչպե՞ս գրեմ,որ այստեղ եմ,
Որ երազ չի այս ամենը...



Լուսաբացը ծիծաղում է թռչունների կտուցներով
Քարերը կոշտ ծև են առել վարպետների մուրճերի
տակ:
Նռունկները պողպատոտ բարձրացել են ամեն
կողմից: